

ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ,  
ԱՆՁԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԴԱՎԻԹ  
ԵՊԷ հոգեբանության տեսության և  
պատմության ամբիոն*

Ժամանակակից հետազոտությունները, նվիրված լինելով ստեղծագործական աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը, նոր մտքերի ստացմանը, և կրեատիվության հիմնախնդիրների պարզաբանմանը՝ ուղղված են հիմնականում հետևյալ ուղղություններով (3, 5, 7).

- Որոշման ընդունման մեխանիզմների և կառուցվածքների ուսումնասիրում: Կարելի է ասել, որ այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և հայտնաբերված օրինաչափությունները՝ ճշգրտվում:
- Մեկ այլ հետաքրքիր ուղղություն է հոգեկան գործընթացների ֆորմալիզացիայի ճանապարհների և հնարավորությունների ուսումնասիրումը:
- Նոր և լայն տարածում գտած ուղղություն է տարբեր ֆիրմաներում և կազմակերպություններում ստեղծագործական լուծումներ առաջարկող խմբերի կազմման օրինաչափությունների ուսումնասիրումը և դրանց կիրառումը պրակտիկայում:
- Կրեատիվ անձանց անձնական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում և ստեղծագործական պոտենցիալի զարգացման գործնական հնարների մշակում և կատարելագործում:
- Ստեղծագործական աշխատանքի նոր մեթոդների մշակման և արդյունաբերության մեջ դրանց կիրառման ճանապարհների ուսումնասիրում (7):

Առաջին ուղղությամբ տարվող աշխատանքների մվաճումներից կարող ենք համարել այն, որ վերջին տարիներին մտածողության գործընթացին առաջացել են լիովին նոր մոտեցումներ, որոնք առաջարկում են ստեղծագործական աշխատանքում օգտագործել մտածողության մի որոշակի տիպի օրինաչափությունները: Վերջերս, օրինակ, առաջարկվել են մտածողության այնպիսի տիպեր, ինչպիսիք են սուկցեսիվ, ինվերսիոն, առաջընթացի, ամբողջական սպեկտորի մտածողությունները և այլն: Սակայն չպետք է կարծել, թե առաջիկա տարիներում չեն հայտնաբերվի մտածողության նոր տիպեր և օրինաչափություններ, որոնք կօգնեն ավելի արդյունավետ մոտենալ խնդրի լուծման և որոշման ընդունման խնդիրներին:

«Արհեստական ինտելեկտի» (ԱԻ) ստեղծման և հոգեկան գործընթացների ֆորմալիզացիայի խնդիրների պարզաբանման հիմնական հարցադրումներից է, թե կարո՞ղ է արդյոք ԱԻ-ն ունենալ որակապես նոր դրսևապատճառայնություն, հուզական կարգավորում, նպատակադրում: Այս ուղղությամբ հետազոտությունները շարունակվում են լայն թափով կիրառական մաթեմատիկայի, կիրեռնետիկայի և հոգեբանության խաչմերուկներում:

Կարելի է նշել, որ կրեատիվ աշխատաստիճաններ արդեն գործում են այնպիսի համաշխարհային կազմակերպություններում, ինչպիսիք են՝ Fairchild Semiconductor (Intel միկրոսխեմաների արտադրություն), Hullett-Packard, Ford, IBM, Xerox, Mitsubisihi, Toshiba, Toyota և այլն: Այս կազմակերպություններում կրեատիվ խմբերն աշխատում են «ուղեղային գլոսի», «ТРИЗ» (Գյուտարարական խնդիրների լուծման տեսություն) և այլ մեթոդներով, որոնք մշակվում և կիրառության մեջ են մտնում համարյա ամեն ամիս:

Անդրադառնալով այն հիմնական պայմաններին, որոնք ժամանակակից հետազոտությունների արդյունքում համարվել են արդյունավետ՝ ստեղծագործական աշխատանքով զբաղվելիս (7).

1. Համապատասխան գիտական միջավայր. մարդկանց խումբ, որոնք զբաղված են որոշակի խնդիրների լուծմամբ: Խմբում ամեն մեկը պետք է ունենա իր դերը՝ «պլաներ», «ղիագնատ», «տեխնիկ», «էսքետ», «անկախ» և «մեթոդալոզ»: Այս դերերի բաշխումը կատարվում է՝ ըստ աշխատանքի բնույթի: Կարող ենք նշել, որ, օրինակ՝ «Ինչ, որտեղ, երբ» խաղի մասնակից խմբերը կազմվում են՝ ելնելով այս օրինաչափություններից:
2. Հետազոտությունների ծրագիր և արդյունքների հանդեպ պահանջարկ:
3. Ֆինանսական, նյութական և ինֆորմացիոն ռեսուրսներ:

Ժամանակակից փուլում օգտագործվում է Internet ցանցը, որի յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն միաժամանակ և՛ ռեսուրս է, և՛ գիտական միջավայր:

Գիտական հայտնագործության ստեղծումը արդի հասարակությունում անցնում է հետևյալ փուլերը (7).

- Հեղինակային փուլ. բազային գաղափարների, սկզբունքների ստեղծում: Այսօր այս փուլն ավելի է բարդանում, քանի որ արդեն կան մի շարք հաստատուն և ճշգրտված մեթոդիկաներ և ստեղծագործական էլիտայի տեղերն արդեն զբաղված են:
- Հաղորդչային փուլ, երբ հեղինակը բազային գաղափարները մերմուծում է միջավայր: Այդ հիմնականում իրականացվում է թրեյնինգների և սեմինարների միջոցով: Այս փուլում գտնվում են հետագա մշակմամբ հետաքրքրված անձինք, գտնվում են հե-

տագոտությունների և գովազդի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Ավելի ակտիվ մասնակիցները ստեղծում են լիցենզավորված մարզիչների խմբեր:

- Ինստիտուցիոնալ փուլ. այս փուլում մասնագետները ստեղծում են կազմակերպություններ, որոնց աշխատանքային նպատակն է խնդիրների լուծումը (problem solving): Ստեղծվում է ինտերնետային համապատասխան էջ, ուր ավելի հեշտ է արտացոլել ձեռքբերումները և այն պորտները, որոնց խնդիրների լուծումների ստացումը հանձն է առնում կազմակերպությունը (7):

Այս մշակված համակարգը հիմնադրվել է. դե Բոնոյի կողմից և մինչ օրս կիրառվում է արևմուտքում: Ցավոք ՀՀ-ում գիտական հետազոտությունների ընթացքը այս բնույթը չի կրում, որն էլ պատճառ է հանդիսանում նրա, որ ուսումնասիրություններ են կատարվում օրինակ այն ուլտրում, որում ժամանակակից հասարակությունը հետաքրքրված չէ:

Այժմ Internet կապի միջոցով է իրականացվում «ուղեղային գրահը», քանի որ ավելի հեշտանում է խնդրի շուրջ աշխարհի տարբեր ծայրերից հավաքել հետաքրքրվողների:

Ժամանակակից հետազոտությունների ուսումնասիրման ոլորտներից է նաև կրեատիվ պոտենցիալի և անձնային առանձնահատկությունների փոխհարաբերության օրինաչափությունների ուսումնասիրումը: Այս հետազոտություններն ուղղված են անձնային հոգեբանական որակների հետ աշխատանքի միջոցով կրեատիվ պոտենցիալի զարգացմանը:

Հաճախ, լատերալ ճանապարհներով նորի որոնման ժամանակ հանդիպում ենք անհաջողությունների: Արդյունքի են հասնում միայն նրանք, ովքեր կարողանում են համբերատար մոտենալ անհաջողություններին՝ ընդունելով, որ դրանք կյանքի անբաժան մասն են (3, 5):

Կենսական շատ իրավիճակներ պահանջում են անհապաղ արդյունավետ լուծում և, քող հսկասություն չթվա, բայց համբերատարությամբ գուգահեռ կրեատիվ անձնավորությունները բնութագրվում են արագությամբ և ճկունությամբ (4):

Ըստ Թեյլորի տվյալների, անձնային որոշակի առանձնահատկությունների մի համակարգ բնութագրում է կրեատիվության մի ձև, մեկ այլ համակարգ սպահովում է մեկ այլ ձևի զարգացմանը: Համապատասխանաբար նա առանձնացրել է կրեատիվության 5 հիերարխիկ մակարդակ (6):

1. *Արտահայտչական կրեատիվություն*. սա անձի մոտ ամենաբնականն է և չի պահանջում անձնային առանձնահատկությունների բարդ հիերարխիկ համակարգ:
2. *Արդյունաբեր կրեատիվություն*. սա պայմանավորված է նորի առաջադրմամբ, սակայն առանց ներքին կապերի և օրինաչափությունների բացահայտման:

3. *Ստեղծագործական կրեատիվություն*։ այն արդեն բնութագրվում է նոր կապերի հայտնաբերմամբ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին։ Չուզահեռ բարդանում է նաև այն անձնային առանձնահատկությունների համակարգը, որն ապահովում է կրեատիվության այս մակարդակը։
4. *Նորարար կրեատիվություն*, և վերջապես
5. *Հայտնագործչական կրեատիվություն*։ սա ամենաբարձրագույն մակարդակն է։ Այն գործում է ամողջապես նոր սկուզբունքներով և ենթարկվում նոր օրինաչափությունների։

Չեմբերսի տվյալներով, բարձրկրեատիվ անձնավորությանը հաստատակամությունը և համոզվածությունը բերում են նրան, որ նա քիչ է հաշվի նստում այլ մարդկանց հետ և չի սպասում բարյացակամ վերաբերմունքի։ «Նրա յուրահատկությունը կայանում է նրանում, որ նա կարողանում է միավորել երեխայի զարմանքը, երևակայությունը և պարզությունը մեծահասակի իրատեսության և հասուն հմտությունների հետ» (4, էջ 296)։

Դայանա Հալպերնը գտնում է, որ քննադատական մտածողություն օգտագործող անձնավորություններն առանձնանում են ճկունությամբ, հաստատակամությամբ, սեփական սխալներն ուղղելու պատրաստակամությամբ, ընդունակ են պլանավորելու, որոնում են փոխզիջումային լուծումներ, ընդունակ են մետակոգնիտիվ մոնիտորինգի (5)։


Գիտելիքն ինքնին դիմամիկ է և որպեսզի լինել արյունավետ առաջադրված լուծումներում, անհրաժեշտ է հեշտ և արագ կողմնորոշվել միջավայրում, լինել հաստատակամ, կազմակերպված և հետևողական՝ սեփական դատողություններում։

Հետաքրքիր կերպով անձնավորության ստեղծագործական գծերին է անդրադարձել Կ.Յունգը՝ անձի իր առաջարկած տիպոլոգիայում (2)։

*Անալիտիկ-վերլուծաբան*։ այս տիպի անձնավորությունների ուժեղ կողմն է վերլուծական ուղեղը։ Խնդիրներում, որով զբաղված են միշտ, առանձնացված են էական կողմերը։ Կարողանում են պարզ և հստակ շարադրել նյութը, լսողին հասցնել հիմնական միտքը։ Մի այլ օրինակ, «հսկիչների» մոտ արտահայտված է կոնկրետ տրամաբանությունը, անվստահություն են ցուցաբերում անսպասելի մտքերին։ «Լիրիկների» մոտ զարգացած է ինտուիտիվ կանխագագացումը, չեն ընդունում գորշություն և ստանդարտներ։ «Ձեռներեց» տիպի մարդիկ օժտված են զարգացած պրակտիկ խելքով և հեշտությամբ իրագործում են գաղափարները։ «Հետազոտողների» ուժեղ կողմը, ըստ Յունգի, զարգացած ճանաչողական մտածողությունն է։ Շատ են ընթերցում և հետաքրքրվում նոր, տարօրինակ երևույթներով (2)։

Մեզնից յուրաքանչյուրն ունի, այսպես կոչված, հոգեբանական կոմֆորտի գոտին, որը վերաբերում է մեր մտքի ձևին և ինչն ավելի

կարևոր է, թե ինչպես ենք վերաբերում նոր խնդիրներին: Դեկլարումը կորցնելու և անհաջողության մատնվելու վախը կարևորագույն գործոններն են, որոնք սահմանափակում են հոգեբանական կոմֆորտի գոտին: Ինչպես հաղթահարել նոր խնդիրները: Այստեղ խոսքը գնում է հոգեբանական կոմֆորտի գոտին նպատակաուղղված խախտելու մասին: Առաջին անգամ մեծ է հնարավորությունը անհաջողության մատնվելու, սակայն արդեն սկսվում է հմտությունների մշակումը՝ լինի դա պարզագույն շարժողական հմտություն, թե կրեատիվ մտեցում:



*Նկ. 1. Կոմֆորտի գոտու պատկերը*

Նկար 1.-ում ներքին շրջանակը պատկերում է անձի հոգեբանական կոմֆորտի գոտին: Նրանում են այն գործերն ու խնդիրները, որոնք իրականացնելիս անձը իրեն հարմարավետ է զգում: Արտաքին շրջանակը խորհրդանշում է խնդիրներն ու գործառույթները, որոնք ծնում են դիսկոմֆորտ: Կրեատիվ սկիզբը այստեղ ներքին օղակից դեպի արտաքին օղակ շարժման գործընթացն է (1):

Այժմ անդրադառնանք մի քանի անձնային որակների, որոնք օգնում են հաղթահարելու այդ սահմանը և նվազեցնում են առաջացած դիսկոմֆորտը:

Հնարքներից մեկը խնդրի վերաձևակերպումն է: Հնարավոր դիսկոմֆորտի վերացման ուղիներից մեկը իրավիճակի այլ տեսությունն է: Հաջողյալը ընդգրկվածությունն է: Անկախ նրանից, թե անձը համաձայն է ընդհանուր խնդիրների և նպատակների հետ, աշխատանքը սկսելիս անհրաժեշտ է ունենալ առաջադրված խնդրի լավագույն լուծումը գտնելու «ներքին դրդապատճառայնություն»: Որպեսզի հաջողությունը իսկապես կարևարվի, անհրաժեշտ է ռիսկի դիմել, ինչ-որ բան դնելով խաղաղաշտին:

Ինչպես ՄեծԲրիտանիայի խոշոր հեռուստաընկերություններից մեկի տնօրեն Ջերեմի Այզեկսն է ասել. «Կրեատիվ անձանց տարբերա-



մատմանը, ինչը մեզ հետագայում թույլ կտա մշակել տվյալ մասնագիտությանը համապատասխան կրեատիվ պոտենցիալի զարգացման համալիր ծրագիր:

Թեստավորման ժամանակ մենք անդրադարձանք 4 հիմնական հոգեկան կառուցվածքների ուսումնասիրության, որոնց փոխազդեցությունը, ըստ մեր վարկածի, պայմանավորում է անձի ստեղծագործական և արդյունավետ մոտեցումը խնդիրների լուծմանը: Դրանք էին.

- Անձնային առանձնահատկություններ.
- Ստեղծագործական պոտենցիալ.
- Կոնստրուկտիվ մտածողության գործակից և բաղադրիչներ.
- Լուծման որոնման արդյունավետություն:

1. Աղյուսակ 1. և 2.-ում ներկայացվում են շախմատիստ աշակերտների և մասնագետների Կետտելի անձնային առանձնահատկությունների թեստավորման արդյունքների միջինները:

Աղյուսակ 1

Մասնագետներ	ԱՆՉԱՅԻՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ																
	MD	A	B	C	E	F	G	H	I	L	M	N	O	Q <sub>1</sub>	Q <sub>2</sub>	Q <sub>3</sub>	Q <sub>4</sub>
Միջին	5	9	4	7	5	6	6	7	9	3	7	6	8	10	7	8	5

Ինչպես նկատելի է տվյալներից, մասնագետների խմբում բարձր ցուցանիշներ են նկատվում անձնային հետևյալ ցուցանիշներից.

A - Շփվողականություն - բարձր ցուցանիշների դեպքում անձը բաց է, բարեսիրտ և շփվող: Ուշադիր է, հարաբերություններում փափկասիրտ: Մեծ սիրով աշխատում է մարդկանց հետ, ակտիվ է կոնֆլիկտների հարթահարման գործում, վստահելի է, չի վախենում քննադատությունից, հույզերը վառ են և հագեցած:

I - Չգացմունքայնություն - բարձր արդյունքների դեպքում դիտարկվում է փափկություն, կախվածություն, ռոմանտիզմի միտում, բնույթի արտիստիկությունը, աշխարհի գեղագիտական ընկալումը: Կարելի է նշել էնպաթիայի ընդունակության զարգացվածության մասին:

Q<sub>1</sub> - Ռադիկալիզմ - բարձր արդյունքների դեպքում անձը քննադատական է, բնութագրվում է ինտելեկտուալ հետաքրքրությունների առկայությամբ, մտածողության վերլուծականությամբ, ձգտում է լավ տեղեկացված լինել: Ավելի հակված է փորձարարականության:

Անձնային գործոններից ցածր է արտահայտված L - Վստահություն գործոնը: Ցածր արդյունքների դեպքում անձը բնութագրվում է համբերատարությամբ, հեշտ է հարմարվում մարդկանց, վստահում է և արդյունավետ աշխատում կոլեկտիվում: Փաստորեն մասնագետների խմբի ընդհանուր անձնային բնութագրում առանձնանում են վերոնիշյալ գործոնները:

Աշակերտներ		
	MD	A
Միջին	7	8

Աշակերտների միջինի շրջակայքում ցածր կամ բարձր ցույց է տալիս, որ մային գործոնները յունքներ: Տվյալների արդյունքում

2. Կրեատիվ արդյունքները.

Տորրենսյ ստյին, մտածողական բազիր, որոնց բնություններ կատարել և ազատ ստացված

Ստեղծագործ է, որ առաջ է քալության հասկացման պոտենցիալի զացման ճանապարհ

Հետազոտման երկու խմբերում:

Մասնագետներ	Հետազոտման
Միջին	

Ինչպես նկատվում է արտահայտություններում մեր անցկոս ուսանողների ընդունակության արդյունքները:





երբ անձի ոչ ստանդարտ մտածողության պոտենցիալը ավելի զարգացած է, քան երևակայության դաշտի ազատ ասոցիացիաներ ստեղծելու ընդունակությունը: Հնարամտությունը և միավորման ընդունակությունը, ինչպես և այլ հետազոտություններում ավելի թույլ է արտահայտված, քան մյուս երկու որակները: Սակայն առավելագույն և նվազագույն արդյունքներ ցուցաբերած անձինք տարբերվում էին հատկապես ազատ ասոցիացիաներ ստեղծելու ընդունակության արդյունքներով:

Աղյուսակ 4

Աշակերտներ	ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆ				
	Հնարամտություն	Միավորման ընդունակութ.	Ոչ ստանդ. մտածողութ.	Ազատ ասոցիաց.	Կրեատիվություն
Միջին	15	16	22	21	74

Պատկերը մի փոքր այլ է աշակերտների խմբում. ստեղծագործական պոտենցիալի միջինը ավելի ցածր է, քան մասնագետների խմբում և ավելի շատ ի հաշիվ ոչ ստանդարտ մտածողության արդյունքների: Ազատ ասոցիացիաներ ստեղծելու հատկության, հնարամտության և միավորման ընդունակության արդյունքները գտնվում են նույն միջակայքում:

Անհատական վերլուծությունը մեզ տալիս է հետևյալ արդյունքները. և՛ մասնագետներին, և՛ աշակերտների խմբում ստեղծագործական պոտենցիալի առավելագույն արդյունքներ ցուցաբերած անձնավորությունները անհատական առանձնահատկությունների Չ<sub>1</sub> - Ռադիկալիզմ գործոնից ցուցաբերել էին ամենաբարձր արդյունքները:

Հետևաբար, ստեղծագործական պոտենցիալի բարձր արդյունքները շախմատիստների մոտ կախված են հատկապես ոչ ստանդարտ մտածողության զարգացման աստիճանից և մասնագիտացմանը զուգահեռ զարգանում է ստեղծագործական պոտենցիալի հենց այդ բաղադրիչը, սակայն ինչ-ինչ պատճառներով ավելի ռիզիկո է և զարգացման չի ենթարկվում ազատ ասոցիացիաներ ստեղծելու հատկությունը, ինչպես այլ մասնագիտություններում:

3. Կոնստրուկտիվ մտածողության գործակցի և նրա հատկությունների էպչտայնի հարցաթերթի արդյունքները:

Կոնստրուկտիվ մտածողությունը հասկացվում է այնպիսի հատկությունների ինտեգրալ հատկություն՝ ընդ որում հուզական ղեկավարումը և վարքի ղեկավարումը ուղիղ համեմատական են, իսկ կատեգորիկ, սնահավատ և էգոտերիկ մտածողությունները հակադարձ համեմատական:

Հուզական ղեկավարումը և վարքի ղեկավարումը կոնստրուկտիվ մտածողության երկու կարևոր բաղադրիչներից են: Ընդհանուր նրանք ո-

րոշում են արդյունքները և իրադարձությունը գործողության Կոնստրուկտիվ մտածողություն է գործում է ճկունությամբ: Ստորև ներկայացված են:

Մասնագետներ	Հուզակց. ղեկավ.
Միջին	15

Աշակերտներ	Հուզակց. ղեկավ.
Միջին	14

Ստացված արդյունքների գործակցի միջակայքում:

Անհատական պոտենցիալի բարձր արդյունքները կախված են մտածողության զարգացումից են, քան մյուս հետազոտություններում և առավելապես ինչպես:

Նույն արդյունքացահայտող վարքի տարման ժամանակ:

Ստացված արդյունքներից կան և կորելացիայի գործումները:

ա. Մասնագետների կախված անձնային



տիվ մտածողության գործակցի հետ: Սա վկայում է, որ վերոհիշյալ անձնային գործոնների արտահայտվածությունը հարաբերվում է մտածողության կոնստրուկտիվության հետ:

բ. Ինչպես նաև մասնագետների խմբում ուղիղ համեմատական կախվածություն ունեն լուծման արդյունավետությունը և կրեատիվ պոտենցիալը, որը վկայում է, որ կրեատիվ պոտենցիալի զարգացմանը գուրդահեռ աճում է լուծման որոնման արդյունավետությունը՝ կախված ժամանակային գործոնից:

գ. Կտորելացիոն վերլուծությունը ի հայտ բերեց նաև այլ ուղիղ և հակադարձ համեմատական կապեր անձնային առանձնահատկությունների, կրեատիվ պոտենցիալի, կոնստրուկտիվ մտածողության և լուծման արդյունավետության միջև, որոնք սակայն կարիք ունեն հետագա ուսումնասիրման և մեկնաբանման:

*Հետազոտության արդյունքում առաջարկում ենք.*

- Մասնագետների խումբն ընդունել որպես ստուգիչ խումբ, որտեղ կրեատիվ պոտենցիալը ավելի բարձր էր և նաև առկա էին անձնային առանձնահատկությունների շեշտադրված գործոններ:
- Աշակերտների խմբի հետ անցկացնել կրեատիվ պոտենցիալի զարգացման թրենինգային ծրագիր, որը հատկապես ուղղված կլինի ոչ ստանդարտ մտածողության և ազատ ասոցիացիաներ ստեղծելու հատկությունների զարգացմանը՝ կիրառելով մտային քարտեզների կազմման և ուղեղային գրոհի ինչպես նեղ ուղղվածություն ունեցող, այնպես էլ կրեատիվ լայն դաշտին ուղղված վարժություններ:
- Թրեյնինգային ծրագիրը բաղկացած կլինի երկու փուլից. առաջին փուլը ուղղված կլինի կրեատիվ լայն դաշտի զարգացմանը բուն հոգեբանական տեխնիկաներով՝ «Մտքերի ցանց», «Լեռնաբորո ԴաՎինչիի» մեթոդները և ընդհանուր խնդիրների շուրջ մտային քարտեզներ կազմելու և ուղեղային գրոհներ իրականացնելու միջոցով:
- Դրանից հետո միջանկյալ չափումը թույլ կտա ի հայտ բերել կրեատիվ պոտենցիալի զարգացման ընդհանուր տենդենցները և անձնային որակների համապատասխան փոփոխությունները:
- Թրեյնինգային ծրագրի երկրորդ մասը ուղղված կլինի արդեն զուտ շախմատային ոլորտում խնդիրների լուծման գործում հոգեբանական տեխնիկաների կիրառման հմտությունների ձևավորմանը:
- Աշակերտների ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջնական արդյունքները համեմատվելու են ստուգիչ խմբի արդյունքների հետ, որն էլ թույլ կտա զարգացումը դիտարկել ոչ միայն ինքն իր հանդեպ, այլև՝ մասնագետների խմբի արդյունքների հետ:

1. *Грин*
2. *Гулен*
3. *Друз*  
1999.
4. *Креч*  
шение  
мышл
5. *Халпер*
6. *Роуди*
7. <http://v>

СОВР  
КРЕ  
ИН.

Статья по  
ности и иннова  
действие кре  
обенностей. Эт  
проблематике.  
креативного п  
психологическ  
Армении.

ԸՄ

Ընտանեկ  
կացվում ընտ  
Է.Գ.Էյդենիլլեր  
րացված բնութ  
բաղադրություն  
տանիքի զարգ

